

ԴՐԱՄԱԳԵՏ ՊԵՐՃ ՍԱՊԱՊԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անցյալ դարում ձևավորված դրամագիտությունը դարձել է պատմական գիտությունների դարգացման կարևորագույն աղբյուրներից մեկը, նպաստելով ժամանակագրության, չափագիտության, հնագրության, ապրանքադրամային հարաբերությունների, ներքին և արտաքին առևտրի և պատմական բնույթի այլ հարցերի ուսումնասիրությանը:

Հայաստանի դրամագիտական նյութերի քննությանը անդրադարձել են Եվրոպայի հայագիտության կենտրոններում, ընդ որում առավելապես Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների մոտ: Հետազոտությունները հայ դրամագիտության հարցերով Հայաստանից դուրս հիմա էլ շարունակվում են: Վերջին երեք տասնամյակների ընթացքում լուրջ աշխատանքներ կատարվեցին Մերձավոր արևելքի հայկական գաղթավայրերում, մասնավորապես Լիբանանում և Սիրիայում: Դրանց մեջ իրենց ուրույն տեղն ունեն Պերճ Սապապղյանի հոգվածները նվիրված ինչպես անտիկ՝ հայ-հռոմեական, այնպես էլ միջնադարի՝ հայ-արաբական և հայ-սելջուկյան ժամանակաշրջանների դրամների քննությանը:

Պերճ Սապապղյանը ծնվել է 1918 թվականին Սիրիայի Հալեպ քաղաքում, նախնական կրթությունը ստացել է տեղի Հայկազյան վարժարանում, միջնակարգը՝ Ֆրանսիական դպրոցներում: Այնուհետև ավարտելով Լոնդոնի համալսարանի իրավագիտական ճյուղը դասավանդել է Հալեպի Հայկազյան վարժարանում, աշխատակցել «Ճիրատ» թերթին, եռանդուն մասնակցություն ունեցել Հայկական Բարեգործական ընդհանուր միության մշակութային գործունեությանը՝ դասախոսություններ կարդացել հայագիտական նյութերի շուրջը:

Դեռևս երիտասարդական տարիներից Պ. Սապապղյանը հետաքրքրվել է պատմության հին շրջանով, հավաքել է հին ու միջնադարյան հայկական ու արաբատառ դրամներ և ստեղծել իր սեփական դրա-

մագիտական հավաքածուն: Տիրապետելով արաբերեն և եվրոպական լեզուներին, հետեւելով մասնագիտական գրականութեանը, խորամուկ լինելով հարազատ ժողովրդի պատմութեան սկզբնաղբյուրների մեջ, Պ. Սապապաղյանը պարզաբանեց մի շարք հարցեր, որոնք երկար ժամանակ մնացել էին վիճելի և անորոշ:

Նա իր առաջին գործում առավել հավաստի տվյալներ ներկայացրեց անտիկ աշխարհի խոշորագույն ճակատամարտերից մեկի՝ մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտի գոտեմարտին մասնակցած հռոմեական զորքերի թվաքանակի մասին, որ այնքան «անհեթեթ համեմատություններով ներկայացված են Հռոմին համակիր աղբյուրներու կողմէ», ինչպես գրում է հեղինակը: Հիմք ընդունելով Պլուտարքոսի և Ապպիանոսի հաղորդումները՝ Տիգրանակերտում հռոմեացիների բռնագրաված 8000 տաղանդ, այսինքն 51, 114, 115 դրախմ գումարից ամեն մի լեգեոնականի 800 աստիկյան քաշի արծաթ դրամ (միավորի միջին կշիռը՝ 4,10 գ) բաժին հանելու մասին, Պ. Սապապաղյանը հիմնավորեց, որ իրականում Լուկիլլոսի բանակի կազմում եղել է ոչ թե 15,000 այլ, 63,892 զինվոր: Դա մի փայլուն ապացույց է այն կարևոր դերի, որ դրամագիտությունը, ի դեմս Պ. Սապապաղյանի, ունեցավ ընդհանուր պատմութեան մեջ տեղ գտած այնքան վիճելի հարցերից գեթ մեկի պարզաբանման համար:

Պերճ Սապապաղյանի երկրորդ գործը վերաբերում է Կիլիկիայի Հայոց թագավորությանը: Առաջին անգամ պատմաբանների ուշադրությանը ներկայացվեց Գուխտոն Լուսինյան թագավորի (1342—1344) «Կիտայ Թագաւոր Հայոց» արձանագրությունը: Քննութեան առարկան թագավորի կոչվող հազվագյուտ դրամն է, արծաթե դրամ, մոտ երկու գրամ քաշով: Ի տարբերություն հայոց այդ գահակալի բուն անվան՝ Կիտոն, Կուիտոն կամ ընդհանրացված Կի ձևի, դրամը վկայում է, որ Կիլիկիան Հայաստանում գործածվել է նաև Լիկա, որից և սեռական հոլովի Կիտայ ձևը: Հայոց անձնանունների համար դրամագիտական նյութերից քաղված այս վկայությունը ուշագրավ նորույթ է:

Առավել բովանդակալից Պ. Սապապաղյանը հանդես եկավ հայարաբական առնչություններին վերաբերող դրամագիտական նյութերի քննութեամբ, ոգեշնչված այն վիճակից որ, իր խոսքերով ասած, «Հայկական դրամագիտությունը, վերջին քսան տարիներու ընթացքին բոլորեց զարթոնքի նոր շրջան մը և՛ հայրենիքին մեջ և՛ արտասահմանի»: Հայկական ՍՍՀ-ի տարածքում հայտնաբերված հին ու միջնադարյան դրամներն ու դրամական գանձերը մասնագիտական քննութեան են-

թարկվեցին և հրատարակվեցին Հայաստանում թողարկված արաբական դրամների ժամանակագրական տախտակները, ինչպես նաև դրամական շրջանառության տվյալներով նորովի լուսաբանվեցին երկրի տնտեսական կապերի հիմնական ուղղությունները խալիֆայության դարաշրջանում: Ի լրումն հայրենիքում կատարված հետազոտությունների, Պ. Սապալյանը ներկայացրեց տարբեր տարեթվերով Դվին, Արմինիա, Առան, Պարտավ, Մադան-Բաջունայս տեղանուններով 26 դրամներ, որոնք այժմ պահվում են Բաղդադի, Կոստանդնուպոլսի, Կահիրեի, Դամասկոսի և այլ թանգարաններում ու հանդես եկավ վաղ արաբական դրամների թողարկման գլխավոր կենտրոնների, մասնավորապես Դամասկոսի և Վասիթի, ինչպես նաև Արմինիայի վերաբերյալ դիտողություններով: Մեկ տարի անց՝ 1975 թ. Սապալյանը հանդես եկավ ուշագրավ հաղորդումով առաջին արաբական արծաթե դրամի մասին, որի վրա արձանագրված էր Հայաստանի (Արմինիա) անունը: Այդ հետաքրքիր վկայությունը տեղիք տվեց խորհրդածությունների և կմնա անհերքելի քանի դեռ չեն գտնվել նոր փաստեր:

Հայ արաբական հարաբերությունների վերաբերյալ 1981 թ. լույս տեսավ «Թողարկված է Արմինիայում» արաբերեն արձանագրությամբ երկու պղնձե դրամների (ֆիլսեր) մասին Պերճ Սապալյանի վերջին հոգվածը: Դրամագետը ցույց տվեց, որ տեղական կյանքի պատմության ուսումնասիրության համար պղնձե դրամներն առաջնակարգ նշանակություն ունեն: Դրվագված լինելով ներքին շուկայի, տվյալ դեպքում Հայաստանի կարիքների համար, պղնձե դրամները, իրենց վրա ունեցած գրություններով, տեղեկություններ են հաղորդում նախ այդ ժամանակ իշխած ամիրանների (ոստիկանների) մասին: Այդ ամիրանները, իրենց զորքերով և պաշտոնյաներով, ապրում էին վաճառաշահ Դվինում, որի քաղաքային շուկայի համար, տեղական ամիրանների հսկողությամբ, նրանց անունների հիշատակությամբ, թողարկվում էին հիշյալ ֆիլսերը: Բրիտանական թանգարանում պահվող Հայաստանի (Արմինիա) արաբ ամիրա Իսհակ իբն Մուսլիմի անվամբ (745—750) անտարեթիվ պղնձե դրամի և Աղվանքում (Առան) հիշրայի 153 տարեթվով (այսինքն 770) Արմինիայի փոխարքա ալ-Մահդիի հրամանով թողարկված պղնձե դրամի արաբերեն արձանագրությունների, դրամների կնիքները, փորագրող վարպետների սխալների ու վրիպումների մասին իր մտքերն է հայտնել Պ. Սապալյանը, միաժամանակ ցույց տալով «անոնց թանկագին նպաստը մեր պատմագրության համար»:

Պ. Սապալյանը փորձեց ցրել այն շփոթը, որ գոյություն ունի

Արտաշեսյան տոհմի վերջին գահակալներ Տիգրան-էրատո թագավոր-
 թագուհու արյունակցական կապի վերաբերյալ: Հիմք ընդունելով դրա-
 մագիտական նոր տվյալները, մասնավորապես մ.թ.ա. Ա. դ. 8—7 թվա-
 կաններին վերագրված դրամները, նա ցույց տվեց, որ, դրանց թողար-
 կումից մոտ մեկ դար անց, պատմիչ Տակիտոսի հաղորդումը հիշյալ
 արքայական անձերի քույր-եղբայր և միաժամանակ ամուսիններ լի-
 նելու մասին ենթակա է վերանայման: Նա ելնում էր այն ընդհանուր
 տվյալներից, որ Արտաշեսյանները ունեին հելլենիստական բարքեր,
 որ նրանց համար խորթ էր քույր-եղբայր արյունակցական ամուսնու-
 թյունը, որ մատենագրության մեջ Տակիտոսը վիճելի մատենագիր է,
 իսկ նրանից բացի ուրիշ ակնարկություն չկա այդ առթիվ և որ միշտ
 արքայական ամուսնությունները հետապնդել են նախ և առաջ քաղա-
 քական նպատակներ, հետևաբար Տիգրան Դ-ը պետք է ձգտեր ամուս-
 նանալ ոչ թե իր քրոջ, այլ ավելի շուտ դրացի երկրներից մեկում իշ-
 խող արքայական կամ Հայաստանի ազդեցիկ նախարարական տներից
 մեկի դստեր հետ, որով նոր հենարան կստեղծեր իր տիրակալության
 դիրքերն ամրապնդելու նպատակով: Խորանալով այսպիսի նուրբ հար-
 ցերի մեջ նա փորձում էր գտնել առավել հավանական պատասխաններ
 իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Զարգացնելով քննությունը,
 Պ. Սապալադյանը նկատեց նաև, որ եթե էրատոն արտաշեսյան ժագում
 ունենար, ապա դրամի վրա պետք է պատկերվեր իր հարազատ տոհ-
 մական թագով և կոշվեր Թագուհի: Հիրավի, թանգարանում պահվող
 Տիգրան-էրատո հազվագյուտ դրամների վրա էրատոն պատկերված է
 առանց թագի, հար և նման ժամանակի հոմեական պատրիկուհու:
 Սրանք, անշուշտ, պատահականություններ չեն, որ նկատել է դրամա-
 գետը և դրանով իսկ հանգել այն եզրակացության, որ հարկ է առա-
 ջիկայում մանրակրկիտ ուսումնասիրել Տիգրան-էրատո արյունակցա-
 կան կապերի վարկածը: Ուշագրավ է, որ Պ. Սապալադյանը, հիմնվելով
 պատմական փաստերի վրա, էրատոյի պատկերի շուրջը դրամի վրա
 դրոշմված հունարեն գրությունը թարգմանել է էրատո Արքայուհու՝
 ելնելով հելլենիստական երկրներում, մասնավորապես Սիևկյանների
 մոտ ընդունված թագուհիներին մեծարելու տիտղոսաձևից:

Պերճ Սապալադյանի վերջին գործերից մեկը նվիրված է Կիլիկիայի
 Հայոց թագավոր Հեթում Ա-ի գահակալության տարիներին (1226—1270)
 թողարկված դրամների ուսումնասիրությանը: Քննելով Հեթումյան հա-
 րըստության առաջացման պայմանները, Պ. Սապալադյանը շեշտում է
 այն կարևոր դերը, որ ունի Կիլիկյան Հայաստանը Հեթումյան արևել-

քից դեպի Եվրոպա տարվող ապրանքային կարավանների համար: Տարանցիկ առևտրից ստացվող եկամուտները նպաստում էին ուժեղացնելու երկրի պաշտպանունակությունը: Հայոց թագավորությունը ձեռնարկում էր ամրապնդել իր դիրքերը տարանցիկ առևտրում: Դեռևս Լևոն Ա-ի ժամանակներից պայմանագրեր էին կնքվել օտարերկրյա վաճառաշահ քաղաքների հետ: Կիլիկյան Հայոց թագավորության արժաթե դրամներն իրենց կշռային չափով (2,60 գ) և արծաթի մաքրությամբ (90—92 տոկոս) բարձր վարկ ունեին միջազգային շուկայում: Օտար վաճառականները, հավանաբար ոչ առանց պատճառի, նախընտրում էին ապրանքների փոխանակումը կատարել բարձրորակ արծաթե դրամներով, որպիսիք էին Զապել-Հեթումի պատկերներով Կիլիկիայի Հայոց պետության դրամները: Այդ դրամները թողարկվում էին Զապել-Հեթումի ամուսնության և համատեղ գահակալության տարիներից: Միջազգային առևտրում լայն ընդունելություն գտած այդ դրամները ճանաչված էին ամենուրեք և այդ էր պատճառը, որ նրանց թողարկումը շարունակվեց նաև Զապելի մահից (1252) հետո և հարատևեց մինչև Հեթումի թագավորության վերջին օրերը (1270): Դրամագետի ուշադրությունից չի վրիպել այն իրողությունը, որ Հեթում Ա-ի թագավորության տարիներին Մերձավոր արևելքի երբեմնի գլխավոր քրիստոնյա պետությունը՝ Բյուզանդիան գրեթե դադարել էր արծաթե դրամներ թողարկելուց: Փոքր Ասիայում արծաթե դրամների թողարկման մենաշնորհը Հեթումի գլխավորած Հայոց թագավորությանն էր պատկանում:

Այդ պայմաններում փոխել շրջանառության մեջ լայնորեն ճանաչված և ընդունված դրամների պատկերատիպը՝ ձեռնառու չէր: Ինչ վերաբերում էր Կիլիկիայում Հեթում Ա թագավորի օրոք թողարկված արծաթե դրամներին, որոնց վրա մի կողմից պատկերված է Հայոց միապետը ձիու վրա, իսկ մյուս կողմից՝ արաբերեն գրությամբ, բայց առանց որևէ պատկերի, գրված են Ռումի սելջուկյան սուլթաններ Ալադ-Դին Քալկուբադի (1219—1236) և Դիյաս ադ-Դին Քալխուսրաուի (1236—1245) անունները, ապա դրանք Պ. Սապպադյանը գնահատում է որպես բացառիկ դրամներ, որոնց տարածումը Իկոնիայի սուլթանության շուկաներում նպատակ ուներ ընդլայնելու հայկական առևտրի ոլորտը:

Տարաբախտաբար, Պերճ Սապպադյանը շատ կարճ կյանք ունեցավ դրամագետության ասպարեզում: Այդուհանդերձ, նրա հրատարակած բոլոր մեզ հայտնի գործերը վերաբերում են հայ ժողովրդի պատ-

մության դրամագիտական կարևոր հարցերին: 1982 թ. նա կնքեց իր մահկանացուն:

Հայ դրամագիտությունը կորցրեց իր նվիրյալներից մեկին, որի ջանքերն ուղղված էին առավել գործոն դարգացնելու դրամագիտական միտքը Հայոց պատմության անորոշ հարցերը լուսաբանելու ուղղությամբ: Առաջիկայում, երբ քննության ենթարկվի Պ. Սապապաղյանի հին և միջնադարյան դրամների անձնական հավաքածուն, բացառված չէ, որ գտնվեն կարևոր և նոր վկայություններ նրա ստեղծագործական մտահղացումների մեջ նշված այլ հարցերի վերաբերյալ:

Պերճ Սապապաղյանը Սիրիայի Հնագիտական ընկերակցության վարչության անդամ էր: Նրա մահվան առթիվ Սիրիայի Հնագիտական ընկերակցության նախագահ Ս. Ջ. ալ-Քալաբիբին «Ջամահիր» թերթում գրել է. «Կորցրեցինք մի գիտնականի, որը զարգարում էր Սիրիայի Հնագիտական ընկերակցությունը և մենք հպարտանում էինք նրանով, քանզի մի անձնավորություն էր, օժտված գիտնականի լավագույն հատկանիշներով»:

Պ. Սապապաղյանի գիտական հարուստ գրադարանը (հազարից ավելի հատորներով), որը պարունակում է դրամագիտական և արևելագիտական շատ արժեքավոր ուսումնասիրություններ, նրա մահվանից հետո, որպես նվիրատվություն, փոխադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գրադարան:

Ծ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Պ. Սապապաղյան, Լուկուլոսի ղինվորներուն թիվը Տիգրանակերտի ճակատամարտին (ըստ դրամագիտական տվյալներու), Հայկազյան հայագիտական հանդես, հ. Դ, Պելյուսթ, 1973, էջ 97—102:

2 Նույնի, Կիլիկիո Կի Լիզինյան (Գվիտոն Լուսինյան) թագավորին ցարդ չհրատարակված արծաթ-թագվորին մը, Զարթոնք օրաթերթ, Պելյուսթ, 29 մայիս 1973:

3 Նույնի, Հայ-արաբական դրամագիտության մեկ քանի հարցերու շուրջը, Հայկազյան հայագիտական հանդես, հ. Ե, Պելյուսթ, 1974, էջ 161—181:

4 Նույնի, Արաբական կայսրության առաջին արծաթ տիրհները կը կրեն Հայաստան անունը, Դեղարդ, Սուրիահայ տարեգիրք, Հալեպ, 1975, էջ 1—8:

5 Նույնի, Դրամագիտական և պատմագիտական առնչություններ արաբական շրջանին, Նոր ապրիլ պարբերագիրք, Հալեպ, 1980, Բ տարի 1 (4), էջ 66—71:

6 Նույնի, Տիգրան Դ-ի և Երատոյի արյունակցական կապերու հարցին շուրջը, Հայկազյան հայագիտական հանդես, հ. է, Պելյուսթ, 1979, էջ 121—130:

7 Նույնի, Հեթում Ա-ի Հեթում-Ջապել և երկնեղվյան դրամներու մասին, Հայկազյան հայագիտական հանդես, հ. Ը, Պելյուսթ, 1980, էջ 233—248: Վերջերս լույս տեսավ,

«Պ. Սապապաղյան, Դրամագիտական հարցեր, Պելյուսթ, 1986» ժողովածուն: